

Յունիս 20, 2007

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահ՝ Պերն Սեդրակեանի Յայտարարութիւնը

Համաձայնութիւն Կիպրոսի Հանրապետութեան Կրթական եւ Մշակութային
Նախարարութեան եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան միջեւ

Որպէս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Նախագահ, սիրով կ'ողջունեմ Կիպրոսի Հանրապետութեան Կրթական եւ Մշակութային Նախարարութեան եւ ՀԲԸՄ-ի միջեւ այսօր, Յունիս 20, 2007ին կնքուած այն համաձայնագիրը, որով Ակլանտիկայի Կրթարանը, իր 400էն աւելի ուսանողներով, 2007/2008 դպրոցական տարեշրջանին ժամանակաւոր կերպով պիտի պատսպարուի Մեյգոնեան Կրթական Հաստատութեան նշանակուած շէնքերէն ներս: Սոյն կրթարանի ժամանակաւոր տեղափոխութիւնը անհրաժեշտ է, որպէսզի կրթարանի բնականոն գործունէութիւնը չխանգարուի եւ պատասխանատուները կարողանան փութով կատարել Ակլանտիկայի Կրթարանի շէնքերուն անյետաձգելի վերանորոգութիւնները:

ՀԲԸՄը անմիջապէս դրապէս պատասխանեց Կրթական եւ Մշակութային Նախարարութեան խնդրանքին: ՀԲԸՄը որոշեց նաեւ Մեյգոնեան կալուածը անվնար տրամադրել Ակլանտիկայի Կրթարանի ժամանակաւոր բնակութեան համար, այն նկատողութեամբ թէ Նախարարութեան կողմէ Միութեան առաջարկուած շօշափելի վարձքը գործածուի Ակլանտիկայի Կրթարանի շէնքերու նորոգութեանց անհրաժեշտ ծախսերուն համար:

ՀԲԸՄը ընդառաջեց Կրթական եւ Մշակութային Նախարարութեան խնդրանքին, իբրեւ պարզ գնահատական արտայայտութիւն այն բոլոր աջակցութեանց, զորս հայկական գաղութը եւ մասնաւորապէս ՀԲԸՄը երկար տարիներու ընթացքին վայելած են Կիպրոսի մէջ:

ՀԲԸՄը, որ իր հարիւրամեակը տօնակատարեց այս տարուայ ընթացքին, կը շարունակէ իր գոյութիւնը որպէս աշխարհի մեծագոյն հայ կազմակերպութիւնը, բազմաթիւ մասնաճիւղեր ունենալով 28 երկիրներու եւ 75 քաղաքներու մէջ: Իր կրթական, մարդասիրական եւ մշակութային գործօն ծրագիրներու շնորհիւ, Միութիւնը ամէն տարի կը հասնի աւելի քան 400,000 հայերու կարիքներուն, ոչ միայն սփիւտի, այլ նաեւ Հայաստանի Հանրապետութեան մէջ: ՀԲԸՄը կը վերահաստատէ իր յանձնառութիւնը Կիպրական գաղութին հանդէպ: ՀԲԸՄը բոլոր կիպրացիներուն օգտին ծառայող ծրագիր մը մշակելու մասին կը մտածէ, որպէս երախտագիտութեան արտայայտութիւն Կիպրոսի Հանրապետութեան կառավարութեան եւ ժողովուրդին՝ հայ ժողովուրդին հանդէպ ցուցաբերած իրենց աներեր հաւատարմութեան եւ աջակցութեան համար:

Այս առթիւ, կը յայտնեմ իմ անկեղծ գնահատանքս Կիպրոսի Հանրապետութեան յարգելի Նախագահին՝ Ն.Վ. Տիար Թասու Փափատոփուլոսին, եւ Կրթական եւ Մշակութային Նախարարին՝ Ն.Վ. Տիար Աֆիս Քլիանթոսին, իրենց անձնական օգնութեան եւ գործակցութեան համար, սկնկալելով որ մեր գործակցութիւնը ժամանակի ընթացքին աւելի պիտի սերտանայ:

CENTRAL BOARD OF DIRECTORS:

PRESIDENT - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - ARSHAVIR GUNDJIAN. **TREASURER** - SAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PAPAZIAN.

HONORARY MEMBER - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.

MEMBERS - *United States*: M. MICHAEL ANSOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASRALIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEJKIAN, ARDA NAZERIAN HARATUNIAN, SARKIS JEBEJIAN, LEVON NAZARIAN, SINAN SINANIAN, DICKRAN TEVRIZIAN. *Argentina*: RUBEN KECHICHIAN. *France*: ARIS ATAMIAN, LEVON KEBABDJIAN. *Switzerland*: VAHE GABRACHE. *Syria*: VASKEN YACOUBIAN.

DIRECTOR EMERITUS - BARRY ZORTHIAN.

COUNCIL OF TRUSTEES - SARKIS DEMIRDJIAN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNIG YACOUBIAN.

IN MEMORIAM - BOGHOS NUBAR, *Founder*; ALEX MANOOGIAN, *Honorary Life President*.